

ԱԶԳԻ ՄԵԾԵՐԸ

ՌՈՒԲԵՆ ՄԵՎԱԿ


1912 թվականի ապրիլի 29-ին Լոզանից Ռուբեն Սևակը իր նամակում Հրանտ Լազարյանին հայտնում էր «ամենավերջին փափագը» երկրագործ լինել, կյանքի «վերջին տարիներն» անցկացնել լուսնային ու բնության մեջ: Ամենավերջին... քսանյոթամյա երիտասարդը կանխագույն էր մտեցրել մահը, թե սա պոետական կեցվածք էր իրականության հանդեպ, առկա կարգերն ու բարքերը մերժելու, ռուսների հոգիներին վայել գոյության հաստատման ձև, «աստվածորեն ապրելու» ձգտում: Երա ստեղծագործության էությունը բնորոշ է կյանքի և երազների հակասությունը: Մի կողմից նրբագույն ապրումներ, մեղմ սիմվոլիկ պատկերներ, բանաստեղծական տեսիլներ, մյուս կողմից պայքար տրոբիկո, տանապող մարդու ազատության համար: Լամակի տողերը պերճախոս հաստատում են անհունության, մենության մեջ ապրելու և ստեղծագործելու անհնարինության: Խաղաղ պոետիզմի անիրագործելիությունը, ճակատագրային անխուսափելիությունը տառապանքից ու մաքառումից, բանաստեղծին տանում է դեպի ազգային-ազատագրական պայքար: Հեղինակը պարզորոշ տեսնելով «Պոլսո մղձավանջը... Սոցիալի մուխն ու Գոմորի բոցը», նա վերադառնում է հայրենիք նահատակվելու: Ոչ ոք չէր հավատա ոչ մի ականատեսի հուշերի, եթե պահպանված չլինեք մի ուրիշ նամակ: Անհավատալի փաստը. «...կցանկամ, որ վերջնականապես հայրենիք վերադառնալիս առջեք երթամ գունե գարուն մը- կյանքին հաշվված գարուններն մին- Վենետիկ անցնել, ապրիմ, ապրիլս գգամ, մեննիս կանխագայել առջ» (նամակը գրված է 1911-ի փետրվարի 4-ին, Լոզանից):

Ինձ համար գրելը երգել է: Բոլոր մխիթարությունս սա երկաթի փոքրիկ գրչիս մեջն է: Ու մենավոր ապաստանիս մեջ ձևաճան գիշերներ, ինձմե երջանիկ մարդ չէ կարելի երևակայել ռուսավորի մը ավարտումեն վերջ:

Ռուբեն Սևակ

ծին: Լոզանի բժշկական համալսարանը 1911-ին ավարտելուց հետո աշխատում է տեղի հիվանդանոցներում որպես օգնական բժիշկ: Ուսանելու շրջանում նա ծանոթանում է գերմանական բարձր դասի մի ընտանիքի դստեր Յաննի Ապպելի հետ, որը դարձավ նրա կինը հակառակ աղջկա ծնողների արգելքներին (հակառակությունը շուտով ի հարկե վերացավ և Սևակի նամակներից իսկ երևում է, որ նրան վերաբերվում էին ջերմ համակրանքով): Երիտասարդ և գեղեցիկ ամուսինները երկու գավակ ունեցան Լոնդոն և Շամիրամբ: Յաննիի և Ռուբենի նամակները ռուսների, անմար սիրտ մի վիպասանություն են, այժմ մեզ համար արդեն ազգային գրականության պատմության հնախից մի դրվագ ողբերգական ավարտով: Ինչպես պատմում է Սևակի ընկերներից մեկը Գ. Ամատյանը, Յաննիի հետաքրքրվում էր հայ մշակույթով և սկսել էր ամուսնուց հայերենի դասեր առնել:

նույնպես ամբողջությամբ չկարողացավ հրատարակել: Ռուբեն Զարդարյանը շարքի մասին գրեց. «Չէք կարող երևակայել, թե որպիսի խանդավառ ընդունելություն գտած են անոնք ընթերցող հասարակության մեջ... Ասիկա նախ կապացուցանե այն ան-



կան միության կազմակերպած հիվանդապահության դասընթացներում: Գրական աշխատանքի նոր, բուռն շրջան էր սկսվել նաև, իր հարազատ տարերքի մեջ էր արևմտահայ արվեստագետների միջավայրում: Առաջին համաշխարհային պատե-

պետք է ազատ արձակվեն: Ականատես Հասան անունով թուրք կառապանի պատմությունը բացում է սպանության հանգանակները: Հանսպարիին կառքերը կանգնեցնում են: Կարծում է, բայց ոստիկանության պաշտոնյան ակնածանքով բարևում է անձանթին, որին հետևում էին չորս ուրիշներ մինչև ատամները զինված: Տեղափոխությունն այսպիսով խաբեություն էր, նախապես ճշգրտորեն մշակված էր հինգ գոհերի սպանության ծրագիրը: Նրանց ձեռքերը կապված էին և դիմադրել չէին կարող: Կառապան անկանական նկատի ունի Սևակին, երբ նշում է. «Անոնցմե մեկը երիտասարդ մըն էր ևս մորուքով և վառվածու աչքերով»: Ոստիկանները խուզարկում են գոհերին, կողոպտում նրանց ունեցածը և հեռանում: Կառապանը մնում է և հեծվից դիտում սարսափելի տեսարանը: Հինգ դահիճները հարձակվում են հինգ գոհերի վրա, մերկացնում, կապում ծառերին. «Հետո չեթեպետեք և իր մարդիկը իրենք դաշույնները մերկացուցին և սկսան դանդաղորեն և հանդարտ կերպով զանոնք մորթոտել: Դատապարտյալներու աղաղակը և անոնց հուսահատական կատաղությունը սիրտս կճմելին»:

տարակուսելի գրական ճարտարությունը, որով կգրեք ձեր հոգևածները քերթվածի մը չափ թրթռուն...»: Բսկ Հարություն Ալ-փիարին հիացնում էին արվեստագետի ձիրքերը. «Զագումներու փափկագգած նկարիչ մը, լեզվի ciseleur մը, և բառին ամբողջ ուշույնը հաճելի գրագետ մը: Գրական նոր ճյուղ մը կ'ստեղծեք կոր»:

Ռուբեն Սևակը (Ռուբեն Չիլինկիրյանը) ծնվել է 1885-ի փետրվարի 15-ին Մարմարայի եվրոպական եզերքի Սիլվիլի գյուղաքաղաքում: «Մանչերու գերեզմանը» գրվածքը հուշ է Սիլվիլիից: Նախ երկաթագործ, ապա երկաթեղենի առևտրական հայրը Հովհաննես աղա Չիլինկիրյանը աշխատում է հիմնավոր կրթության տալ իր գավակներին: Ծննդավայրում Ռուբենն ավարտում է Ասքանազյան տարրական նախակրթարանը, ապա երկու տարի սովորում է Պարտիզակի գիշերօթիկ ամերիկյան վարժարանում, իսկ 1901-ին անցնում է Կ. Պոլսի նշանավոր Պերպերյան վարժարան, որն ավարտում է 1905-ին:

Ստեղծագործությունը ընդունել էր Ռուբեն Սևակը 1919, «Չանդրբեր վերհիշումների» էջ 113-121): Չանդրբերը Սևակը բուժում է մի թուրք չեթեճիի աղջկան: Թուրքը, «խանդաղապանի գագումներ» հայտնելով բժշկին, համոզում է մահմեդականություն ընդունել անխուսափելի սպանությունից փրկվելու համար: Սևակը հրաժարվում է, ավելին, նա, որ Աստված ու կրոն չէր ընդունում, հավատափոխությունը համարելով ազգադավություն, ամբողջ երկու օր աշխատում է համոզել տասնամյուր որոշ հայերի, թե մահը մահմեդականացումից լավ է, քան ստիպելով երդվել նրանց, որոնց վրա կանգնած ուներ: Օգոստոսի 26-ին, հինգշաբթի առավոտյան հինգ հոգի երկու կառքով ուղարկվում են Այաշ, որոնց մեջ Ռուբեն Սևակն ու Դանիել Վարուժանը: Երեկոյան ժամը 12-ին հասնում է նրանց սպանության լուրը, իսկ մեկնելուց ընդամենը 24 ժամ հետո Կ. Պոլսից հեռագիր է ստացվում, որ նրանք



բեցույցում» հայ մշակույթի բազմաթիվ այլ գործիչների հետ տրրված Ռուբեն Սևակի կարճատև կենսագրականում նշված են իր ծրագրած «Քառսը», «Միրո գիրքը», «Վերքին հայերը»: Նույնը հավաստում է նաև Մերուժան Պարսամյանը («Շանթ», Կ. Պոլիս, 1918, թիվ 2): Այդ գրքերը չկարողացավ հրատարակել: Սևակի արձակ առաջին գործը «Տարի մը վերջ» պատմվածքը լույս տեսավ 1907-ին, իսկ 1918-ին «Ազատամարտում» սկսեց հանդես գալ «Բժիշկին գիրքեն փորցված էջեր» շարքով, որը մեծ հաջողություն ունեցավ և որը

Դասընկերները լավ ծանոթ էին նրա կազմակերպած ինքնագործ աշակերտական խմբում կարողացած բանաստեղծություններին: Բսկ առաջին տպագիր գործը 1905-ին «Մասիսի» (թիվ 24,13 օգոստոսի) խմբագրության ծանոթությամբ «Բաժանման խոսքեր» բանաստեղծությունն էր, որ Պերպերյանի շրջանավարտ Ռուբեն Չիլինկիրյանը կարդացել էր վկայականների բաշխման ավարտական հանդեսին, արժանանալով ներկաների գնահատանքին: Փայլուն ավարտելով վարժարանը, ցայտուն ընդունակություններ դրսևորած ամենատարբեր առարկաների յուրացման մեջ, մեծ ուսուցչապետ Ռեթենու Պերպերյանի թելադրությամբ ու աջակցությամբ Ռուբեն Սևակը մեկնում է Եվեյցարիս, 1905-ի աշնանից ուսանելով Լոզանի բժշկական համալսարանում: 1908-ին, սանամանդրության հաստատումից հետո, ամառվա արձակուրդներին նա գալիս է Կ. Պոլիս, կարճ ժամանակով գրբաղվում «Մուրիանդակ» օրաթերթի հրատարակչությանը, սվիրվում հասարակական գոր-